Հավելված N 9
ՀՀ կառավարության 2021 թվականի
հոկտեմբերի 14-ի N 1681 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՈՉՆՉԱՑՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՁԵՎԱԿԵՐՊՎՈՂ ԱՊՐԱՆՔԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ՎԱՅՐԻ ԵՎ ԵՂԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են «Ոչնչացում» մաքսային ընթացակարգով ձևակերպման ենթակա ապրանքների ոչնչացման հետ կապված ապրանքի ոչնչացման հնարավորության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից եզրակացության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից ապրանքի ոչնչացման հնարավորության վերաբերյալ եզրակացության տրամադրման համար հիմք է հանդիսանում սույն կարգի 3-րդ կետով սահմանված իրավաբանական կամ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դիմումը:

3. Ապրանքի ոչնչացման հնարավորության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով իրավաբանական կամ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ դիմումատու) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն (այսուհետ՝ իրավասու մարմին) է ներկայացնում՝

1) գրավոր դիմում, որը ներառում է իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, պետական գրանցման համարը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, հաշվառման համարը, ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ինչպես նաև դիմումատուի գրանցման և գործունեության իրականացման վայրերի հասցեները.

2) ապրանքի անվանումը.

3) արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին (ԱՏԳ ԱԱ) համապատասխան ապրանքի ծածկագիրը.

4) ապրանքի քանակը, ծավալը.

5) ապրանքի նկարագիրը (ագրեգատային վիճակ, բաղադրություն, փաթեթավորում, այլ բնութագրիչներ).

6) ապրանքի վտանգավոր հատկությունները (թունավոր, հրդեհավտանգ, պայթյունավտանգ, կոռոզիոն ակտիվ).

7) ապրանքի «Ոչնչացում» մաքսային ընթացակարգով հայտարարագրման համար հիմք ծառայած պատճառը:

4. Դիմումատուն եզրակացություն ստանալու համար անհրաժեշտ տեղեկություններն ու փաստաթղթերն իրավասու մարմին կարող է ներկայացնել առձեռն կամ փոստով կամ էլեկտրոնային եղանակով:

5. Դիմումատուի կողմից սույն կարգի 3-րդ կետով պահանջվող տեղեկությունները, փաստաթղթերը թերի ներկայացված լինելու կամ վրիպակների կամ անճշտությունների առկայության դեպքում իրավասու մարմինը երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին փոստով կամ էլեկտրոնային եղանակով գրավոր տեղեկացնում է դիմումատուին:

6. Դիմումատուն երեք աշխատանքային օրվա ընթացքում կարող է շտկել փաստաթղթերում առկա թերությունները և լրամշակված փաստաթղթերը ներկայացնել իրավասու մարմին:

7. Փաստաթղթերում թերությունների բացակայության դեպքում իրավասու մարմինը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է եզրակացություն՝ ապրանքների ոչնչացման հնարավորության, տեղի և եղանակի վերաբերյալ, իսկ հանրապետությունում այդ ապրանքների անվտանգ եղանակով ոչնչացման համապատասխան վայրի և իրականացնող կազմակերպության բացակայության դեպքում՝ ապրանքների ոչնչացում իրականացնելու անհնարինության վերաբերյալ, նշելով պատճառը:

8. Եզրակացության տրամադրումը մերժվում է հետևյալ հիմքերով՝

1) եթե չեն ներկայացվել պահանջվող փաստաթղթերը.

2) եթե ներկայացված փաստաթղթերում առկա թերությունները սույն կարգի 6-րդ կետում նշված ժամկետում չեն շտկվել, կամ դրանցում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14.10.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ